

<<ԱՐԱԳԻԼ>> բարեգործական հիմնադրամի

Պատվավոր նախագահ

ՏԻԿԻՆ ՌԻՏԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո տիկին Սարգսյան,

«Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության անձնակազմի և իմ անունից սրտանց ողջունում եմ նախադեպը չունեցող Ձեր նախաձեռնությանը:

Ժողովրդագրական խնդիրները բազմազան են և բազմազորոն՝ ընդգրկելով մեր հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքի գրեթե բոլոր ոլորտները: Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի կայունացման, բնակչության աճի ապահովման տեսանկյունից հատկապես կարևորվում են անպտղության և անպտուղ ամուսնությունների հիմնախնդրի լուծմանը միտված միջոցառումները: Հասկանալի է, որ հիմնախնդրի լուծման նպատակով միայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվելիք միջոցառումներով հնարավոր չէ կարճաժամկետ հեռանկարում իրագործել բազմաթիվ ընտանիքների բաղձալի երազանքը՝ երեխա ունենալու բերկրանքը: Եվ այստեղ է, որ «Արագիլ» հիմնադրամը նրանց օգնության ամուր ձեռք է մեկնում:

«ԱՐԱԳԻԼ» հիմնադրամը բալիկ ունենալու երջանկություն է պարգևելու հազարավոր ընտանիքների, հնարավորություն ընձեռելու իրականացնել տարիների՝ անհնարին թվացող երազանքը, նպաստելու մեր ազգի պահպանմանն ու կայուն ընտանիքների ձևավորմանը:


Համոզված եմ, որ սրտացավ և բարի կամքի տեր մարդիկ կաջակցեն հիմնադրամի աշխատանքներին՝ յուրաքանչյուրն իր հնարավորությունների չափով նպաստելով կարևորագույն այս ծրագրին: Վստահ եմ, որ հիմնադրամին կհաջողվի համախմբել բոլոր հնարավոր միջոցները մարդուն ամենամեծ երջանկությունը՝ երեխա ունենալու հնարավորությունը պարգևելու համար:

Ձեզ և Ձեր շուրջ համախմբված մարդկանց մաղթում եմ
հաջողություններ մարդասիրական ու աստվածահաճո գործունեության
մեջ, որի տարաբնույթ դրսևորումների ականատեսն եմք:

Հարգանքով՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական

հարցերի նախարար



Ա.Ասատրյան